# ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ՍՈՒՍԱՆՆԱ ԳԵՒՈՐԳՅԱՆ

## ՆՈՅՆԱԲԱՂԱԴՐԻՉ ՓՈԽԱՏԵՂՈՅԹՆԵՐԸ ԳՐԱԲԱՐՈՒՄ

Հայերէնը պատկանում է փոխատեղոյթներով հարուստ լեզուների թւին: Փոխատեղոյթներն այն բարդ բառերն են, որոնց կազմում կան առնուազն երկու միեւնոյն բաղադրիչ (միջազգային-ազգամիջյան, մայրաքաղաք-քաղաքամայր, ափամերձ-մերձափնյա, անցակետ-ժամկետանց, գեղանկարիչ-նկարչագեղ, Բեկնազարյան-Նազարբեկյան, Բերդաձոր-Ձորաբերդ): Միայն միեւնոյն բաղադրիչներից կազմուածները՝ նոյնաբաղադրիչ փոխատեղոյթները (բերքառատ-առատաբերք, գեղակամար-կամարագեղ, դատաքննել-քննադատել, իննսունութ-ութսունինը, վարդասէր-Սիրվարդ, Խանամիրեան-Ամիրխանեան) արդեն մի ստուար շերտ են կազմում՝ աւելի քան 5000 բառ: Փոխատեղական նոյն բաղադրիչներով բառերի մեծամասնութիւն՝ 4500-ից էլ աւելին կազմուել է աշխարհաբարում:

Թւով 150 (ներառեալ նաեւ բառային տարբերակները) նոյնաբաղադրիչ փոխատեղոյթներ գտնում ենք «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» բառարանում, որտեղ դրանք ներկայացուած են գրաբար վկայութիւններով:

Ստորեւ բերում ենք այդ բառերի ցանկը՝ բաժանելով 70 փոխատեղական զոյգի: Ակնաղբիւր-աղբիւրակն, արձակահեր-հերարձակ, աւանաշէն-շինաւան, բանածնունդ-ծննդաբան, բանակարգութիւն-կարգաբանութիւն, բանակորով-կորովաբան, բանապաճոյճ-պաճուճաբան, բանապատմութիւն-պատմաբանութիւն, բանասէր-սիրաբան, բանաստեղծել-ստեղծաբանել, բանաստեղծութիւն-ստեղծաբանութիւն, բանընդդէմ-ընդդիմաբան, բանիմաստ-իմաստաբան, բանսուտ-ստաբան, բերան/ա/բաց-բաց/ա/բերան, բերանաբացեալ-բացաբերանեալ, բերդաքաղաք-քաղաքաբերդ, գեղազարդ-զարդագեղ, գեղապատշաճ-պատշաճագեղ, գեղասաղարթ-սաղարթագեղ, գիւղաքաղաք-քաղաքագիւղ, գլխիբաց-բացագլուխ, գլխածանրել-ծանրագլխել, գլխածանրութիւն-ծանրագլխութիւն, գործաձեռն-ձեռն/ն/ագործ, գրագիծ-գծագիր, եօթնեւտասն-տասնեւեօթն, զօրհանապազ-հանապազօր, ընթացակից-կիցընթաց, ընձուղտ-ուղտինձ, իննեւտասն-տասնեւինն, իշակէս-կիսէշ, լիապտուղ-պտղալի, լճածով-ծովալիճ, լուսապայծառ-պայծառալոյս, խայտասպիտակ-սպիտակախայտ, խնդամոլի-մոլեխինդ, խտասաղարթ-սաղարթախիտ, ծրաբոլոր-բոլորածիր, կամայօժար-յօժարակամ, կերպաձեւել-ձեւակերպել, կերպափոխել-փոխակերպել, կուրամիտ-մտակոյր, կտաւահատ-հատակտաւ, հանճարաշատ-շատահանճար, հասակաչափ-չափահասակ, հաւքաջ-քաջ/ա/հաւ, հրաշապայծառ-պայծառահրաշ, հրաշարփի-արփիահրաշ, ձեռնունայն-ունայնաձեռն, մայրասէր-սիրամայր, մայրաքաղաք-քաղաքամայր, մարդաշատութիւն-շատամարդութիւն, միջածով-ծովամէջ, մոլորամիտ-մտամոլոր, մտայո-

ժարութիւն-յօժարամտութիւն, յեղափոխել-փոխայեղել, յեղափոխութիւն-փոխայեղութիւն, նեղսրտել-սրտնեղել, նեղսրտութիւն-սրտնեղութիւն, շահավաճառ-վաճառաշահ, շահավաճառութիւն-վաճառաշահութիւն, շարժահիմն-հիմնաշարժ, պատուասիրել-սիրապատուել, սիրաջան-ջանասէր, սիրասպառած-ասպառածասէր, տուրեւառ-առեւտուր, փոխանունութիւն-անուանափոխութիւն, փոխատեղել-տեղափոխել, փողոցամէջ-միջափողոց:

Բառացանկի զննումը ցոյց է տալիս, որ մեծագոյն մասամբ զոյգերում անդամները նոյնիմաստ են, շատ քիչ դեպքերում՝ տարիմաստ: Վերջիններից են՝ բանածնունդ /որ ծնանի բանս ի մտաց. մտացի/-ծննդաբան /որ գուշակէ եւ խօսի հայելով ի ժամ ծննդեան ուրուք. աստղահմայ/, բանապատմութիւն /պատմութիւն եւ մեկնութիւն բանից/ - պատմաբանութիւն /պատմութեան ճառ/, գրագիծ /գծագրող եւ գծագրեալ/-գծագիր /գծով եւ գրով յօրինեալ պատկեր, կնիք, տառ, դրոշմ/, մայրասէր /սիրող զմայր իւր/ - սիրամայր /սիրող մայր/, սիրաջան /որ ինչ լինի սիրով եւ ջանիւ/ - ջանասէր /աշխատասէր, ուսումնասէր, երկասէր/ եւ էլի մէկ-երկուսը:

«Նոր բառգիրք հայկազեան լեզուի» բառարանում ներկայացուած են գրաբարեան այլ կարգի մօտ 250 բառ /ներառեալ բառային տարբերակները/, որոնք, ինչպէս կտեսնենք, որոշակի զոյգերի միայն առաջին անդամներն են: Դրանց երկրորդ անդամներն արդէն գտնում ենք կազմուած Նոր հայկազեան բառարանից յետոյ: Քննելով այս 500 բառերի ցանկը /այն կբերուի ստորեւ/՝ հեշտ է նկատել, որ զոյգերի պակաս, քան երկու հինգերորդում անդամները տարիմաստ են: Սա նշանակում է, որ աշխարհաբարում լեզուամտածողութեան պահանջով կազմուած նոր բարդութիւնները գրաբարում եղածներից տարբեր իմաստներ են արտայայտել՝ ինչ-ինչ բառերի բաղադրիչների փոխատեղութեամբ: Զոյգերի մօտ երեք հինգերորդում անդամները նոյնիմաստ են: Ուրեմն աշխարհաբարում հարկ է եղել գրաբարի այս բառաբարդութիւնների ներսում կատարել փոխատեղութիւն, բայց արտայայտել նախկին բառիմաստները՝ չնայեած նոյնանիշների գոյութեանը: Ինչո՞ւ են առաջ եկել նման կարգի բառազոյգերը: Պատճառները նախ պայմանաւորուած են նրանով, որ տեղի է ունեցել ինչպէս նախադասութիւնների մէջ բառերի, այնպէս էլ բառաբարդութիւնների ներսում բաղադրիչների շարադասական շրջում: Ապա նաեւ նոր ժամանակներում ստեղծուած որոշակի համատեքստերի պահանջով հարկ է եղել կառուցուածքային հետեւառաջութեամբ ձեւափոխել, թարմացնել գրաբարեան որոշ բառաբարդութիւններ: Կան նաեւ զուգադիպութիւններ, այսինքն՝ գրաբարեաններից անկախ նոր շրջանի կազմութիւններ, որոնք ուղղակի համընկնում են համաբաղադրիչ, բայց ուրիշ, դրափոխութեամբ տարբեր հին կազմութիւնների հետ:

Այժմ վերոյիշեալ 250 բառազոյգերի ցանկը /առաջին անդամները գալիս են գրաբարից, երկրորդները՝ աշխարհաբարից/:

Ախտահալած-հալածախտ, ախտասէր-սիրախտ, ակնվանի-վանակն, աղուհաց-հացուաղ, անձնագեղ-գեղանձն, անուանակից-կցանուն, անուշահոտ-հոտանուշ, աչագեղ-գեղաչ, առատաբուղխ-բղխառատ, առատագութ-գթառատ, առատալոյս-լուսառատ, առատաձեռնձեռնառատ, առատաշնորհ-շնորհառատ, աստղալոյս-լուսաստղ, արդիւնաշատ-շատարդյուն[1], արժանապատիւ-պատւարժան, արժանատես-տեսարժան, արիւնախառն-խառ-

1 Աշխարհաբարեան՝ ոչ դասական, ուղղագրութեամբ բառերը վերցուած են **Է. Աղայան**, Արդի հայերենի բացատրական բառարան, Երեւան, h .h. 1,2, 1976 եւ **Հ. Բարսեղյան**, Հայերեն ուղղագրական-ուղղախոսական

նարյուն, արհինաշափ-շափարյուն, արհինասակավ-սակավարյուն, բազմաբիր-բյուրաբազում, բանագէտ-գիտաբան, բանագիտութիւն-գիտաբանություն, բանակարգ-կարգաբան, բանասիրութիւն-սիրաբանություն, բանաքննութիւն-քննաբանություն, բանջարակեր-կերաբանջար, բարձրագլուխ-գլխաբարձր, բացերես-երեսբաց, բուրազուարթ-զվարթաբույր, գանգրագեղ-գեղագանգուր, գանգրահեր-հերագանգուր, գեղապաճոյճ-պաճուճագեղ, գիսակագեղ-գեղագիսակ, գլխաբացութիւն-բացգլխություն, գլխապինդ-պնդագլուխ, գործաւէր-սիրագործ, գործասիրութիւն-սիրագործություն, գործադրուն-դրնագործ, գործախայտ-խայտագործ, գործավամեծ-մեծագործ, գործավաւէր-սիրագործ, գրադարձ-դարձագիր, գրադեղ-դեղագիր, գրազարդ-զարդագիր, գրասէր-սիրագիր, գրատպել-տպագրել, գրատպութիւն-տպագրություն, զօրէպինդ-պնդազորի, դալարագեղ-գեղադալար, դիզափայտ-փայտադեզ, դռնաբաց-բացդուռ, դռնափակ-փակդուռ, երփնագեղ-գեղերփն, զանցասահմանսահմանազանց, զգաստամիտ-մտազգաստ, զուարթալոյս-լուսազվարթ, զուգահաւասարհավասարազույգ, զուգաշար-շարազույգ, զուգաշարել-շարազուգել, ընկերասէր-սիրընկեր, թունալի-լիաթույն, ժամապահ-պահաժամ, իշավայրի-վայրի էշ, իւղագլխել-գլխայուղել, լարախեղդ-խեղդալար, լարաձիգ-ձգալար, լարաչափ-չափալար, լորամարգ-մարգալոր, լուսազարդ-զարդալույս, լուսաճաճանչ-ճաճանչալույս, լուսարփի-արփիալույս, խաղակատակ-կատակախաղ, խաղասէր-սիրախաղ, խաչազարդ-զարդախաչ, խաչափայտփայտախաչ, խաւարամիտ-մտախավար, խեղդամահ-մահախեղդ, խճաքար-քարախիճ, խնդալի-լիախինդ, խոտակեր-կերախոտ, խռովամիտ-մտախռով, խռովայոյզ-հուզախռով, խռովասէր-սիրախռով, խունկեղէգն-եղեգնախունկ, խտածառ-ծառախիտ, ծաղկազարդզարդածաղիկ, ծառազարդ-զարդածառ, ծիծաղագեղ-գեղածիծաղ, կամասէր-սիրակամ, կամահաճոյ-հաճոյակամ, կամարազարդ-զարդակամար, կայծակնափայլ-փայլակայծակ, կանաչագեղ-գեղականաչ, կապակից-կցակապ, կապգլուխ-գլխակապ, կարթաձուկն-ձկնակարթ, կարմրավարդ-վարդակարմիր, կենդանաբոյս-բուսակենդանի, կիսաբաժին-բաժնեկես, կիսաբառ-բառակես, կնամարդ-մարդակին, կոչնահրավէր-հրավիրակոչ, կորագլուխ-գլխակոր, կորովամիտ-մտակորով, հաղորդասէր-սիրահաղորդ, հասակագեղ-գեղահասակ, հատաջուր-ջրահատ, հարցաքննին-քննահարց, հաւաքաբան-բանահավաք, հաւաքաբանել-բանահավաքել, հաւաքաբանութիւն-բանահավաքություն, հոգէսէր-սիրահոգի, հողաբոյս-բուսահող, հրաշագեղ-գեղահրաշ, հրաշատեսիլ-տեսլահրաշ, հրաշէկ-շիկահուր, հրատապ-տապահուր, ձիագետի-գետաձի, ձիարշաւ-արշավաձի, ճաճանչագեղ-գեղաճաճանչ, մահադեղ-դեղամահ, մահաթոյն-թունամահ, մատնացոյց-ցուցամատ, մարդաշատշատամարդ, մարդացուլ-ցլամարդ, մարմնագեղ-գեղամարմին, մեծահանճար-հանճարամեծ, մեծաշնորհ-շնորհամեծ, մերկանդամ-անդամամերկ, միջասահման-սահմանամեջ, միջօր-օրամեջ, մկնարջ-արջամուկ, մտաբացութիւն-բացամտություն, մտադիւր-դյուրամիտ, մտախոհ-խոհամիտ, մտախոհութիւն-խոհամտություն, մտակուրութիւն-կուրամտություն, մտահաճոյ-հաճոյամիտ, մտահարուստ-հարստամիտ, մտամոլորութիւն-մոլորամտություն, յորդալոյս-լուսահորդ, յորդառատ-առատահորդ, յօժարասէր-սիրահոժար, յօժարասիրութիւն-սիրահոժարություն, նաւակամուրջ-կամրջանավ, նաւամարտ-մարտանավ, նեղասիրտ-սրտնեղ, նկարագեղ-գեղանկար, նկարագիծ-գծանկար, նկարադրոշմ-դրոշմանկար,

պերմինաբանական բառարան, Երևան, 1973 գրքերից:

նկարակերպ-կերպանկար, նշանագիր-գրանշան, նշանացոյց-ցուցանշան, նորացոյց-ցու-
ցանոր, շահասէր-սիրաշահ, շահասիրել-սիրաշահել, շահասիրութիւն-սիրաշահութիւն, շա-
տագուակ-գաւակաշատ, շատակեր-կերաշատ, շատաջուր-ջրաշատ, շարագիր-գրաշար,
շարագծել-գծաշարել, շարաձայն-ձայնաշար, շիկակարմիր-կարմրաշեկ, շրջագրական-
գրաշրջական, շրջագրել-գրաշրջել, շրջբոլոր-բոլորաշուրջ, շրջմոլիկ-մոլաշրջիկ, ոսկէզարդ-
զարդոսկի, ոսկէթել-թելոսկի, ոսկէձոյլ-ձուլոսկի, չքնաղագեղ-գեղաչքնաղ, պաճուճազարդ-
զարդապաճոյճ, պայծառագեղ-գեղապայծառ, պատմագրական-գրապատմական, պա-
րարտամարմին-մարմնապարարտ, պարզերես-երեսպարզ, պետմոգ-մոգպետ, պտղահատ-
հատապտուղ, ջանասէր - սիրաջան, ջլապինդ-պնդաջիլ, ջրառատ-առատաջուր, ջրհեղեղ-
հեղեղաջուր, ջրհոր-հորաջուր, սալայատակ-հատակասալ, սալաքար-քարասալ, սաղար-
թաթաւ-թաւսաղարթ, սայրասուր-սուրսայր, սառնասառոյց-սառցասառն, սիրատարփ-
տարփասեր, սկզբնապատ-պատասկիզբ, սպիտակասեւ-սեւասպիտակ, սրաթեւ-թեւասուր,
սրամերկ-մերկասուր, սրտապինդ-պնդասիրտ, սրտապնդել-պնդասրտել, վաճառասէր-սի-
րավաճառ, վաճառասիրութիւն-սիրավաճառութիւն, վայրաբնակ-բնակավայր, վարսագեղ-
գեղավարս, վիպապատում-պատմավէպ, տեղակից-կցատեղ, տեղապահ-պահատեղ, տե-
րեւախիտ-խիտատերեւ, տիրագլուխ-գլխատեր, տիրասէր-սիրա/ու/տեր, տիրաւանդ-ավան-
դատեր, տնապահ-պահատուն, փոխադրել-դրափոխել, փոխադրութիւն-դրափոխութիւն,
փոխակարգել-կարգափոխել, փոխակերպութիւն-կերպափոխութիւն, փոխաձեւել-ձեւափո-
խել, փոխաձեւութիւն-ձեւափոխութիւն, փոշահող-հողափոշի, փոշաջուր-ջրափոշի, քայլա-
փոխ-փոխքայլ, քարագիր-գրաքար, քարագլուխ-գլխաքար, քարաժայռ-ժայռաքար, քարա-
ծեծ-ծեծքար, քարաշէն-շինաքար, քարորմ-որմնաքար, քարակիր-կրաքար:

Եթէ տալու լինենք նոյնաբաղադրիչ փոխատեղոյթների զարգացման փուլերը, ապա
կարելի է բաժանել երեք պայմանական շրջանի: Հայկազեան բառարանից բառաքաղուած
70 փոխատեղուած զոյգերը կարելի է անուանել **գրաբար-գրաբար** փոխատեղոյթներ,
250 զոյգ փոխատեղոյթները՝ **գրաբար-աշխարհաբար** փոխատեղոյթներ եւ երրորդը՝
**աշխարհաբար-աշխարհաբար** զոյգեր՝ 2000 եւ աւելի:

Անդրադառնալով առաջին բառացանկի վերլուծութեանն ըստ խօսքի մասերի[2]
կարելի է նկատել, որ դեռեւս գրաբարում գոյութիւն են ունեցել բոլոր նիւթական խօսքի մա-
սերին պատկանող փոխատեղոյթներ: Երկրորդ՝ գրաբար-աշխարհաբար բառացանկում,
նոյնպես միայն նիւթական խօսքի մասերի պատկանելութեան փոխատեղական բառազոյ-
գեր են: Պարզ է դառնում, որ երեւոյթի ծաւալման հետեւանքով, շաղկապներ եւ վերաբերա-
կան բառեր արտայայտող փողատեղոյթներն առաջ են եկել աշխարհաբար-աշխարհաբար
փուլում:

Այսպիսով՝ մեր լեզուում փոխատեղական զոյգերի կազմման գործընթացը եղել է շա-
րունակական՝ ժամանակի, թարգմանական պատճէնման, որոշակի ներլեզուական օրինա-
չափութիւնների թելադրանքով՝ անկախ նրանց գործածականութիւնից, կանոնականութիւ-
նից, գործառական կամ հասարակական բնութագրումներից:

2 Տե՛ս **Ս. Գեւորգյան**, Նոյնաբաղադրիչ փոխատեղոյթների քննութիւնը (ըստ խօսքի մասերի). «Լրաբեր հասարակական գիտութիւնների», Երեւան, 2007, թ. 2: